2. **Чошанов А.А.** Гибкая технология модульного обучения. -М.,1996.

Р.С. ОВСЕПЯН, Г.З. МУСАЕЛЯН

РАЗВИТИЕ ТРУДОВЫХ РЕСУРСОВ И ПРОФЕССИОНАЛЬНОЕ ОБРАЗОВАНИЕ

Рассмотрены вопросы уровней профессионального образования и развития трудовых ресурсов. Проанализированы некоторые понятия современного профессионального образования, представляющие интерес в области профессиональной педагогики и экономики профессионального образования.

***Ключевые слова*:** профессиональное образование, профессиональная подготовка, профессия, специальность, квалификация, компетенция.

R.S. HOVSEPYAN, H.Z. MUSAYELYAN

DEVELOPMENT OF LABOUR FORCE AND PROFESSIONAL EDUCATION

The issues on the levels of professional education and development of work force are considered. some concepts of modern professional education are analyzed, concerning the field of professional pedagogics and the economy of professional education.

***Keywords**:* professional education, professional training, profession, specialty, qualification, competence.

ՀՏԴ 005.94:37

Ռ. Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ, Հ.Զ. ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

ԿԱԴՐԵՐ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ

Քննարկվում են պրոֆեսիոնալ կրթության պահանջարկի կանխատեսմանը վերաբերող հարցեր: Առաջարկվում է բարձրագույն պրոֆեսիոնալ կրթությունը նախնական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթության հետ համեմատելու և մասնագիտական որակավորումների նոր համակարգի ստեղծմանը նոր մոտեցում ունենալու խնդիր:

Առանցքային բառեր. պրոֆեսիոնալ կրթություն, փոքր ու միջին բիզնես, ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության բնագավառում որոշակի առաջընթաց է նկատվում:

Այս գործում իրենց ուրույն տեղն ունեն ժամանակին արհեստագործական ամենատարբեր պրոֆեսիաներ ստացած աշխատողները [1]: Այդ հանգամանքը հիմք է տալիս եզրակացնել, որ մեր տնտեսավարող սուբյեկտների շրջանում գնալով աճում է հետաքրքրությունն արհեստագործության նկատմամբ, ինչն էլ, բնականաբար, անհրաժեշտություն է առաջացնում այդ գծով գործնական հետազոտություններ կատարելու իմաստով: Սակայն պետք է նշել, որ վերջին ժամանակներս արհեստագործական գաղափարների ու պրակտիկայի զարգացմամբ մեր հանրապետությունը մեծ չափերով հետընթաց է ապրել, ներկա փուլում հրամայական պահանջ է առաջացել որոշակի կոնկրետ քայլեր ձեռնարկելու արհեստագործական կրթության որակն ու մակարդակը շուկայական պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Կարծում ենք, որ սա որոշակի իմաստով արդիական հիմնախնդիր է, որը, ըստ մեզ, կարող է հետաքրքրել ինչպես հոգեբաններին, մանկավարժներին, սոցիոլոգներին այնպես էլ՝ տնտեսագետներին: Մեծ վրիպում կարելի է համարել այն հանգամանքը, որ մեզանում ժամանակակից արհեստագործությունը՝ որպես պրոֆեսիոնալ գործունեության առավել արդիական ձև, իսկ արհեստագործները՝ որպես սոցիալ-պրոֆեսիոնալ խումբ, լուրջ հետազոտության չեն ենթարկվել: Կարծում ենք, որ սոցիոլոգիական բազմակողմանի համատեքստում այս հիմնախնդրի այժմեականացումը պետք է կապել հետազոտությունների առարկայական նոր դաշտի ձևավորման հետ՝ տարածաշրջանային սոցիոլոգիայի, պրոֆեսիաների սոցիոլոգիայի, կրթության սոցիոլոգիայի ընդգրկույթում:

Ժամանակակից պայմաններում արհեստագործների պրոֆեսիոնալ կրթության կայացմանն ու զարգացմանն ուղղված սոցիոլոգիական միտվածությունը պետք է ենթադրի սոցիոլոգիական համալիր հետազոտությունների կատարում մոնիթորինգային ռեժիմում: Ըստ մեզ՝ դրանցում պետք է ներառվեն ոչ միայն վերլուծական գործընթաց, այլ նաև սոցիոլոգիական ախտորոշում, այդ հարցերի զարգացման ու լուծման հետ կապված կանխատեսական մոդելավորում՝ տարածաշրջանային, ինչպես նաև ուսումնական հաստատության մակարդակով: Միանգամայն հասկանալի է, որ արհեստագործական պրոֆեսիոնալ կրթությունը պետք է սերտորեն առնչվի երիտասարդության կողմից կրթական սպասելիք պահանջմունքները ճիշտ կանխորոշելու հետ:

Դա հնարավորություն կընձեռի պարզել, թե պրոֆեսիոնալ կողմնորոշման ուղղությամբ ինչպիսի սպասումների և պայմանների առկայությունն ապագայում

կարող է հանգեցնել նոր պահանջմունքների առաջացման ոչ միայն արհեստագործական, այլ նաև մյուս բնագավառներում: Հարկ է նշել, որ ներկայումս հանրապետությունում չկան գիտականորեն հիմնավորված կանխատեսումներ պրոֆեսիոնալ կրթության որոշակի մակարդակ և պատրաստվածություն ունեցող մասնագետների պահանջարկի վերաբերյալ: Միանգամայն ավելորդ է ապացուցել, որ այդ հանգամանքը մասնագետների պատրաստման գործընթացում հետագայում անկախատեսելիորեն կհանգեցնի նրանց՝ ըստ նպատակի օգտագործելու հարցում մեծագույն անհամամասնությունների, ինչը հղի է տնտեսության համար խիստ բացասական ազդեցությամբ անկանխատեսելի հետևանքներով: Ստեղծված իրավիճակը պահանջում է կենցաղային-հասարակական կարծիքի մակարդակով հաշվի առնել երիտասարդության կրթական պահանջմունքների հնարավոր վերակողմնորոշմանն ուղղված, վերջին ժամանակներս ձևավորվող միտումը, որի պարագայում շահադրդումը դեպի գիտելիքների սոցիալապես, այսպես կոչված, հեղինակավոր ճյուղերը, որոշակիորեն արգելակում է երիտասարդի անձնական պրոֆեսիոնալ կրթական հակումների և ձգտումների զարգացումը:

Ասվածը հույժ կարևոր սոցիալական նշանակություն է ստանում: Ըստ մեզ, հարցի լուծման ուղիներից մեկը կարող է հանդիսանալ փոքր ու միջին բիզնեսի ոլորտի համար կադրերի պատրաստումը: Կյանքը ցույց է տալիս, որ մարդկությունը ներկայումս գիտակցում է սոցիալ-տնտեսական զարգացման համար անհրաժեշտ նոր արժեհամակարգի պահանջը:

Աշխարհն ապրում է գլոբալացման և տեղեկատվական տեխնոլոգիաների օրեցօր աճող զարգացում, որի պարագայում ծնվում է գիտելիքներին միտված նոր հասարակություն, որը մարդուց պահանջում է գիտելիքների, կարողությունների և պրոֆեսիոնալ հմտությունների խոր տիրապետում: Մարդը պետք է ներգրավվի անընդհատ և ինքնուրույն ուսումնառության գործընթացում: XXI դարում պահանջարկ է վայելելու ոչ թե պրոֆեսիոնալ որակավորումը, այլ դրան տիրապետելուն միտված բարձր ներուժը՝ ներառյալ նաև մարդու ընդունակությունները, ակտիվ ձգտումներն ու դրանց հասնելուն նպատակադրված հետաքրքրությունները:

Ակնհայտ է, որ վերը նշված սկզբունքները կարելի է ճշմարտացի համարել պրոֆեսիոնալ կրթության ցանկացած մակարդակ ունեցող մասնագետների համար: Մեր տնտեսության զարգացման անցած ժամանակահատվածը ցույց տվեց,

որ Հայաստանում պրոֆեսիոնալ կրթության համակարգում առաջընթաց զարգացում պետք է ստանան նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթությունը: Դա թելադրվում է այն պահանջով, որ ներկայումս սոցիալ-տնտեսական ոլորտում մեծ չափերով աճում է բանվորական բարձրորակ կադրերի և միջին որակավորմամբ մասնագետների պահանջը:

Մեր երկրի անցած պատմությունը ցույց է տալիս, որ արհեստների զարգացումն է այն միակ և ճիշտ ուղին, որը թույլ կտա ապահովել փոքր ու միջին բիզնեսի աճն ու հետագա զարգացումը՝ առանձնապես բնակչությանը ծառայություններ մատուցելու գործում [2]:

Ավելորդ չենք համարում նշել, որ հանրապետությունում կայուն աշխատաշուկայի կազմավորվածության բացակայության պարագայում նեղ մասնագիտական ուսուցումը սովորողի համար հետագայում, ըստ մասնագիտության աշխատանք ձեռք բերելու իմաստով, հայտնի վտանգ ու դժվարություններ է պարունակում: Պետք է նաև հաշվի նստել այն պարզ ճշմարտության հետ, համաձայն որի՝աշխարհի շատ երկրների օրինակով, մեր երկրի տնտեսական զարգացման գլխավոր հանգույցներից մեկը նաև փոքր ու միջին բիզնեսի զարգացումն է: Ժամանակի պահանջով իր գործն սկսող ձեռնարկատերը պետք է ոչ միայն գործունեության որևէ բնագավառում լինի պրոֆեսիոնալ, այլ նաև ունենա տնեսագիտական պատրաստվածության պատշաճ մակարդակ, հարկ եղած դեպքում կարողանա նախագծել արտադրական այս կամ այն պրոցեսը և կարողանա ճիշտ լուծումներ տալ ծագած տեխնիկական հարցերին: Բազմաթիվ կազմակերպություններում աշխատանքային օրվա ընթացքում որոշ մասնագետներ լրիվ կերպով չեն ծանրաբեռնված: Այդ հանգամանքն ստիպում է մտածել այն մասին, որ նա, համապատասխան հարակից պատրաստվածություն ունենալու դեպքում, այդ «ազատե ժամանակի մնացած մասը կարող է օգտագործել պրոֆեսիոնալ այլ գործունեության մեջ: Հաշվի առնելով վերը բերված հարցադրումները, հարց է առաջանում ՝ ինչպե՞ս լուծել դրանք: Մեր կարծիքով, դրա պատասխանը կարելի է գտնել, որպես հնարավոր տարբերակ, բարձրագույն պրոֆեսիոնալ կրթության՝ բակալավրիատի մակարդակով այն լուծելու ճանապարհով:

Հակասության մեջ չմտնելով բարձրագույն պրոֆեսիոնալ կրթության օբյեկտի դաշտում առկա սահմանման հետ, որպես հարցի լուծման հնարավոր ուղի կարելի է քննարկել հետևյալը:

Ներկայումս գործող պետական կրթական չափորոշիչը ներառում է գիտակարգերի, հիմնականում չորս ցիկլ՝ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական,

բնագիտական ու մաթեմատիկական, ընդհանուր մասնագիտական, նեղ մասնագիտական: Որպես վերևում առաջ քաշված հարցը լուծելու ուղի կարելի է առաջարկել, որ ուսանողը իր ուսումնառության գործընթացում ուսումնասիրի առաջին երկու ցիկլերի գիտակարգերը, համապատասխան առարկաներով: Երրորդ ու չորրորդ ցիկլերի փոխարեն, միջին մասնագիտական կրթության երկու—երեք մասնագիտությունների գծով ուսումնասիրի և մասնագիտանա պրոֆեսիոնալ պատրաստման համապատասխան ծրագրերի գծով: Առաջին երկու ցիկլերի առարկաների գծով ուսումնառության արդյունքում ուսանողը կստանա ոչ լրիվ (թերի) բարձրագույն կրթություն՝ վավերացված համապատասխան փաստաթղթերով և երկու-երեք դիպլոմ միջին (կամ նախնական) մասնագիտական կրթության վերաբերյալ: Հասկանալի է, որ ուսումնառության տևողությունը պետք է համապատասխանի բակալավրական կրթության միջազգային չափորոշիչային որակավորման ժամանակամիջոցին, և տվյալ ծրագրով ուսումնառությունն ավարտելուց հետո ուսանողն ստանա այդ աստիճանը:

Դա հնարավորություն կընձեռի աշխատաշուկա դուրս բերել միջին մասնագիտական կրթությամբ լիիրավ մասնագետի, որը ներկա պայմաններում պահանջարկ կվայելի սոցիալ-տնտեսական ոլորտում: Ունենալով երկու-երեք դիպլոմ, ուսումնական հաստատության շրջանավարտն աշխատաշուկայում ավելի քիչ դժվարությունների կհանդիպի: Միաժամանակ էլ, ունենալով ոչ լրիվ(թերի) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ, շրջանավարտը կարող է ուսումնառությունը շարունակել համապատասխանորեն կարճացված ժամանակահատվածով, բարձրագույն պրոֆեսիոնալ կրթության ծրագրով պրոֆեսիոնալ պատրաստվածություն ստանալու համար: Մեր կարծիքով, ուսուցմանն այսպիսի մոտեցումը պրոֆեսիոնալ կրթության բնագավառում հնարավորություն կընձեռի պահպանել հայկական միջին մասնագիտական կրթությունը գործնականում անփոփոխ ձևով, որը հանրապետության սոցիալ-տնտեսական ոլորտի համար ունի իր ուրույն նշանակությունը: Այս ձևը ներդնելիս կարելի է և պետք է խորամուխ լինել ինչպես սոցիալ-տնտեսական խնդիրների հարցերը լուծելու, այնպես էլ ցանկացած քաղաքացուն իր կրթական մակարդակն անընդհատորեն բարձրացնելու ձգտումը բավարարելու իմաստներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. **Հովսեփյան Ռ.Ս.** Պրոֆեսիոնալ կրթությունը և մարդկային ռեսուրսների զարգացումը // ՀՊՃՀ(Պ) Լրաբեր-76.- .-Երևան, 2009.-էջ 1147-1151:
2. **Հովսեփյան Ռ.Ս., Ավագյան Ա.Ա., Խաչատրյան Ռ.Մ.** Պրոֆեսիայի, մասնագիտության և պրոֆեսիոնալ կրթության մի նոր մակարդակի մասին // ՀՊՃՆ(Պ) Լրաբեր-76.- Երևան, 2009.- էջ 1151-1155:

Р.С. ОВСЕПЯН, Г.З. МУСАЕЛЯН

КАДРЫ ДЛЯ МАЛОГО И СРЕДНЕГО БИЗНЕСА

Обсуждаются вопросы прогнозирования потребности профессионального образования. Предлагается совмещение высшего профессионального образования с начальным (ремесленным) и средним профессиональным образованием и новым подходом к созданию новой системы профессиональной квалификации.

***Ключевые слова*:** профессиональное образование, малый и средний бизнес, обучение в течение всей жизни, начальное (ремесленное) и среднее профессиональное образование.

R.S. HOVSEPYAN, G.Z. MUSAYELYAN

PERSONNEL FOR SMALL AND MIDDLE-SIZED BUSINESSES

Issues related to the forecast of the demand for professional education are discussed. It is proposed to combine the higher professional education with the primary (craft) and secondary professional education and also with the new approach to the creation of a new professional qualification system.

Keywords: professional education, small and middle-sized business, lifelong learning, primary (craft) and secondary professional education.

ՀՏԴ 334.761

Ա.Գ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ, Ա.Բ. ԱՍԼԱՆՅԱՆ, Ք.Ա. ՊԵՊԵԼՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՏԵՔՍՏԻԼ ԿԼԱՍՏԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԸ

(*Գյումրի*)

Շարադրվում է նորարական տնտեսության արդիական հարցերի լուծման կլաստերային մոտեցման անհրաժեշտությունը: Դիտարկվում են ֆինանսական մեխանիզմների մշակման հնարավորությունները Շիրակի տարածաշրջանում տեքստիլ կլաստերի սուբյեկտների ձևավորման և արդյունավետ գործունեության նպատակով;

Առանցկային բառեր. կլաստերի ֆինանսական համակարգ, սիներգիական արդյունք, Շիրակի տարածաշրջանի տեքստիլ կլաստեր:

Շիրակի տարածաշրջանի համար տեքստիլ ու կարի արտադրությունների, հարակից արտադրությունների, գիտական ու կրթական կազմակերպությունների,